ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.07.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/259

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 21.06.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2022թ. թիվ 26/26-1/9698-2022 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.05.2022թ. թիվ 02/16.4/5085-2022 գրության հիման վրա, 02.06.2022թ. թիվ 26/26-1/9698-2022 գրությամբ նախաձեռնել է «Գազկոմշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանի վարույթում է գտնվում ՀՀ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Գազկոմշին ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2022/259 ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 19.05.2022թ.-ի թիվ 02/16.4/5085-2022 գրությունը և դրան կից նյութերը (այսուհետ՝ Գրավոր հիմքեր): Ընթացակարգը նախաձեռնվել է 26.05.2022թ.-ին, քանի որ Ընթացակարգը նախաձեռնելու համար ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետի գրությունը ստորագրված է 26.05.2022թ.-ին:

Ընթացակարգի վերաբերյալ առաջին նիստը նշանակված է 22.06.2022թ.-ին, այսինքն Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 27-րդ օրը: Մինչդեռ ՀՀ ֆիննանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 13-րդ կետի համաձայն բողոքի քննությունն պետք է իրականացվեր և որոշումը կայացվեր բողոքը վարույթն ընդունվելու օրվանից ոչ ուշ քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Նշենք, որ սույն դիրքորոշումը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու պահին Ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգվելու վերաբերյալ որոշում տեղեկագրում հրապարակված չէ:

1. Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1. Ընկերությունը մասնակցել է 13.07.2020թ-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) Պատվիրատուի

հայտարարած թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի արդյունքում 29.09.2020թ.-ին Ընկերության և Պատվիրատուի միջև կնքվել է թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի մասով դեռևս 2020 թվականին նախատեսվել են ֆինանսական միջոցներ և Ընկերությունը համաձայն Պայմանագրի 8.13 կետի տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները ամբողջությամբ փոխարինել է թիվ 4395-02 և 4394-02 բանկային երաշխիքներով:

1.2. Պատվիրատուն 19.05.2022թ.-ի թիվ 02/16.4/5085-2022 գրությամբ հայտնել է, որ 2022 թվականի ապրիլի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի մայիսի 11-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին, սակայն հայտնում ենք, որ Ընկերությունը համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին վերաբերյալ առաջարկ www.armeps.am համակարգից չի ստացել:

1.3. Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 19.05.2022թ.-ի թիվ 02/16.4/5085-2022 գրությունը և դրան կից նյութերը:

1.4. Ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է 26.05.2022թ.-ին:

1.5. Ընթացակարգի վերաբերյալ առաջին նիստը նշանակված է 22.06.2022թ.-ին, այսինքն Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 27-րդ օրը:

2. Հայցադիմումի հիմքերը, փաստարկները.

2.1. Բողոքի քննության ժամկետների վերաբերյալ.

ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև (...) նախարարություններին ենթակա այլ մարմիններ, (...) որոնց (...) լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն «2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝ 18)

գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:»:

ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 743-Լ որոշման 34-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմիններն են՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի 580-Ա որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի (ա.) պարբերության համաձայն. «12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝ ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝

«2. Բողոքը ներկայացվում է Լիազորված մարմին (այսուհետ՝ նաև Նախարարություն) գրավոր՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: (...):

3. Ստացված բողոքը նախարարության քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից մուտքագրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (այսուհետ՝ համակարգ) և նույն օրը համակարգի միջոցով տրամադրվում է Անձին՝ (գնումների հետ կապված բողոքներ քննող անձ) (...):

4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է նախարարությունը՝ Գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց

գրավոր տրամադրելու եղանակով: Ընդ որում, (...) ընթացակարգը համարվում է սկսված փաստաթղթերն Անձին տրամադրվելու օրվանից:»

Հրամանի 13 կետի համաձայն՝ բողոքի քննությունն իրականացվում և որոշումը կայացվում է բողոքը վարույթն ընդունվելու օրվանից ոչ ուշ քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով՝ Անձի պատճառաբանված միջանկյալ որոշմամբ: Ընդ որում միջանկյալ որոշումը կայացնելու օրը Անձն ապահովում է դրա մասին համապատասխան հայտարարության հրապարակումը տեղեկագրում:

Վերոգրյալի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ լինելով ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին, հանդիսանում են պետական կառավարման համակարգի մարմիններ: Այդ իսկ պատճառով ՀՀ Ֆինանսների նախարարության և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունները սահմանվում են օրենքով, հետևաբար վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի և Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) Պատվիրատուի ուղարկած հիմքերով նախաձեռնում է մասնակցին Ցուցակում ներառելու ընթացակարգ: Հրամանի 13-րդ կետի համաձայն ընթացակարգի քննության և որոշման կայացման ժամկետը 20 օրացույցային օր է, որը բողոքներ քննող անձի պատճառաբանված միջանկյալ որոշման հիման վրա կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով, ընդորում Հրամանի նույն կետի համաձայն՝ միջանկյալ որոշումը կայացնելու օրը այն հրապարակվում է տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Ինչպես Երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է 26.05.2022թ.-ին իսկ Ընթացակարգի վերաբերյալ առաջին նիստը նշանակված է 22.06.2022թ.-ին, այսինքն Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 27-րդ օրը: Ընդ որում սույն դիրքորոշումը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու պահին Ընթացակարգի

քննության ժամկետը երկարաձգվելու վերաբերյալ որոշում տեղեկագրում հրապարակված չէ:

Այսպես՝ Համադրելով սույն գործում առկա փաստական հանգամանքները և սույն դիրքորոշման 3.1 կետը կարող ենք փաստել, որ այս Ընթացակարգի քննությունն իրականացվում է Հրամանի վերոգրյալ նորմերի խախտմամբ, հետևաբար այն անհրաժեշտ է դադարեցնել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը և գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հանդիսանալով պետական կառավարման համակարգի մարմիններ իրավասու են միայն անել այն ինչի համար ուղղակիորեն լիազորված են օրենքով: Տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարի 600-ն հրամանի 13-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի քննությունը պետք է իրականացվեր և որոշումը կայացվեր Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 20 օրացույցային օրվա ընթացքում, մինչդեռ Ընթացակարգի քննության վերաբերյալ առաջին նիստը նշանակված է Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 27-րդ օրը: Ելնելով այս հանգամանքից կարող ենք փաստել, որ այս ընթացակարգի քնությունն իրականացվում է օրենքի խախտամաբ, ուստի այն անհրաժեշտ է դադարեցնել:

2.2. Համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումները նեկայացնելու ծանուցման վերաբերյալ:

Մրցույթի հայտարարության 1-ին պարբերության հաաձայն՝ «Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, (...), հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Մրցույթի 8.18 կետի համաձայն՝ «8.18 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, (...):»:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ Պայմանագրի 8.13 կետով սահմանված համաձայնագիրը կնքելու վերաբերյալ կապալառուին պատշաճ ծանուցելու համար, անհրաժեշտ է այդ ծանուցումը վերջինիս ուղարկել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգից, ապա կապալառուն այդ հանգամանքի

վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում որակավորման ու պայմանագրի ապահովումներ ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություն կապալառուի մոտ չեն կարող առաջանալ (Օրինակ՝ տե՛ս ՍՑ-ԼՕ-2021/68, ՍՑ-ԼՕ-2021/67, ՍՑ-ԼՕ-2021/69):

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Պայմանագրի 8.13 կետով սահմանված որակավորման ու պայմանագրի ապահովումները ներկայացնելու և համաձայնագիրը կնքելու վերաբերյալ ծանուցումը armeps.am համակարգից չի ուղարկվել, ուստի նշյալից կարող ենք փաստել, որ Ընկերությունը այդ հանգամանքի վերաբերյալ պատշաճ չի ծանուցվել: Հետևաբար նման պայմաններում որակավորման ու պայմանագրի ապահովումներ ներկայացնելու և համաձայնագիր կնքելու պարտականություն Ընկերության մոտ չէր կարող առաջանալ:

2.3. Վերոգրյալից զատ մեկ անգամ ևս նշենք, որ Պայմանագրի մասով դեռևս 2020 թվականին նախատեսվել են ֆինանսական միջոցներ և այդ ժամանակ Ընկերությունը համաձայն Պայմանագրի 8.13 կետի տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները ամբողջությամբ փոխարինել է թիվ 4395-02 և 4394-02 բանկային երաշխիքներով:

Պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք՝

Դադարեցնել կամ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից Գազկոմշին ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ թիվ ՍՑ-ՆԳ-2022/259 ծածկագրով ընթացակարգը»:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/259 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ պնդում է ներկայացված դիրորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.05.2022թ. թիվ 02/16.4/5085-2022 գրությամբ հայտնել է

հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գազկոմշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կնքվել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Վերջինս ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N 415-Ն որոշման հիման վրա 2021 թվականի հուլիսի 15-ին կնքված N 1 համաձայնագրով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2022 թվականի ապրիլի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի մայիսի 11-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին (2021 թվականին ներկայացված N 4394-02 և N 4395-02 բանկային երաշխիքների ժամկետները լրացել են 2022 թվականի փետրվարի 7-ին): Ընկերության կողմից մինչ օրս չեն ներկայացվել համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2022 թվականի մայիսի 13-ից միակողմանի լուծել է:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2022 թվականի մայիսի 16-ին տեղադրվել է www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/259 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Գազկոմշին» ՍՊԸ-ի միջև 29.09.2020թ. կնքվել է թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

3. Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում 19.04.2022թ. «Գազկոմշին» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին է ուղարկվել համաձայնագիր N 4-ի նախագիծը և առաջարկվել վերջինիս մայիսի 11-ը ներառյալ պատվիրատուի ղեկավարին ուղղված գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե թղթային տարբերակով ներկայացնել համաձայնագրի ընկերության կողմից հաստատված (ստորագրված և կնքված) երկու օրինակներ՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին...:

4. Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 11.05.2022թ. թիվ 27 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն համաձայն 29.09.2020թ. կնքված N ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի իրականացնում է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքները:

Պայմանագրի N 4 համաձայնագրի նախագիծը հաստատելու համար պետք է ներկայացնեինք որակավորման և պայմանագրի ապահովումներ: 19.04.2022թ. համաձայնագրի նախագիծը ստանալուց հետո երկրում սկսվեցին քաղաքական պրոցեսներ, որոնք մինչ օրս շարունակվում են: Այս ընթացքում ընկերությունը բանակցում էր ֆիզիկական անձանց հետ՝ նոր գույքեր գրավադրելու համար, սակայն այդ գործընկերները հրաժարվեցին նախնական պայմանավորվածությունից՝ ելնելով երկրում տիրող քաղաքական իրավիճակից:

Ելնելով վերը նշված հանգամանքից՝ խնդրում ենք Ձեզ N 4 համաձայնագրով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու ժամկետը երկարացնել 10 աշխատանքային օրով:

5. «Գազկոմշին» ՍՊԸ-ին ուղղված Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 16.05.2022թ. թիվ 02/16.4/4918-2022 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Գազկոմշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կնքվել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 210 008 239.49 (երկու հարյուր տասը միլիոն ութ հազար երկու հարյուր երեսունինն ամբողջ քառասունինը) ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի N 469-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 176 702 400 (մեկ հարյուր յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն-որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհիտ' Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների' Պատվիրատուն 2022 թվականի ապրիլի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ)

աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի մայիսի 11-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին (2021 թեականին ներկայացված N 4394-02 և N 4395-02 բանկային երաշխիքների ժամկետները լրացել են 2022 թվականի փետրվարի 7-ին):

Ընկերության կողմից մինչ օրս չեն ներկայացվել համաձայնագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2022 թվականի մայիսի 13-ից միակողմանիորեն լուծում է: Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը կտեղադրվի www. procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 16.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.06.2022թ. թիվ 26/26-1/9698-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.05.2022թ. թիվ 02/16.4/5085-2022 գրությունը և կից փաստաթղթերը, «Գազկոմշին» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ ***եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով***: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի

կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***<u>Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները <u>Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:</u> <u>Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Գազկոմշին» ՍՊԸ-ի միջև 29.09.2020թ. կնքվել է թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա

ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթԿապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում 19.04.2022թ. «Գազկոմշին» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին է ուղարկվել համաձայնագիր N 4-ի նախագիծը և առաջարկվել վերջինիս մայիսի 11-ը ներառյալ պատվիրատուի ղեկավարին ուղղված գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե թղթային տարբերակով ներկայացնել համաձայնագրի ընկերության կողմից հաստատված (ստորագրված և կնքված) երկու օրինակներ՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին...:

Ընկերությունը Պատվիրատուին ուղված 11.05.2022թ. թիվ 27 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն համաձայն 29.09.2020թ. կնքված N ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի իրականացնում է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքները:

Պայմանագրի N 4 համաձայնագրի նախագիծը հաստատելու համար պետք է ներկայացնեինք որակավորման և պայմանագրի ապահովումներ: 19.04.2022թ. համաձայնագրի նախագիծը ստանալուց հետո երկրում սկսվեցին քաղաքական պրոցեսներ, որոնք մինչ օրս շարունակվում են: Այս ընթացքում ընկերությունը բանակցում էր ֆիզիկական անձանց հետ՝ նոր գույքեր գրավադրելու համար, սակայն այդ գործընկերները հրաժարվեցին նախնական պայմանավորվածությունից՝ ելնելով երկրում տիրող քաղաքական իրավիճակից:

Ելնելով վերը նշված հանգամանքից՝ խնդրում ենք Ձեզ N 4 համաձայնագրով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու ժամկետը երկարացնել 10 աշխատանքային օրով:

«Գազկոմշին» ՍՊԸ-ին ուղղված Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 16.05.2022թ. թիվ 02/16.4/4918-2022 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Գազկոմշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կնքվել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 210 008 239.49 (երկու հարյուր տասը միլիոն ութ հազար երկու հարյուր երեսունինն ամբողջ քառասունինը) ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի N 469-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 176 702 400 (մեկ հարյուր յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն-որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհիտ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2022 թվականի ապրիլի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի մայիսի 11-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին (2021 թեականին ներկայացված N 4394-02 և N 4395-02 բանկային երաշխիքների ժամկետները լրացել են 2022 թվականի փետրվարի 7-ին):

Ընկերության կողմից մինչ օրս չեն ներկայացվել համաձայնագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2022 թվականի մայիսի 13-ից միակողմանիորեն լուծում է: Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը կտեղադրվի www. procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 16.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով գործում առկա ապացույցների և վկայակոչված իրավակարգավորումների հետ, արձանագրում եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, քանի որ Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում վերջինս Պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից կնքված համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները, որոնք հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված հետևյալ դիտարկումներին, այն է՝ *ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է 26.05.2022թ.-ին, իսկ Ընթացակարգի վերաբերյալ առաջին նիստը նշանակված է 22.06.2022թ.-ին, այսինքն Ընթացակարգը նախաձեռնվելու օրվան հաջորդող 27-րդ օրը: Ընդ որում սույն դիրքորոշումը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու պահին Ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգվելու վերաբերյալ որոշում տեղեկագրում հրապարակված*

չէ, ապա հարկ եմ, համարում արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացված դիտարկումներն անհիմն են հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.05.2022թ. թիվ 02/16.4/5085-2022 գրության հիման վրա, 02.06.2022թ. թիվ 26/26-1/9698-2022 գրությամբ նախաձեռնել է «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգերը, այդ թվում նաև՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց միջև վերաբաշխելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի N 238-Ա հրամանի համաձայն վերաբաշխվել է 02.06.2022թ.-ին և գործի քննությունը սկսվել է նորից:

Ընդ որում՝ ՍՑ-ՆԳ-2022/259 ծածկագրով ընթացակարգի քննության ժամկետը Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 22.06.2022թ. կայացված և Տեղեկագրում հրապարակված միջանկյալ որոշման համաձայն երկարաձգվել է 10 օրացույցային օրով և որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանվել 04.07.2022թ.-ը:

Անհասկանալի է նաև Ընկերության դիտարկումը կապված Ընթացակարգի քննության շրջանակներում 22.06.2022թ.-ին առաջին նիստ նշանակված լինելուն: Հարց է ծագում, թե 22.06.2022թ.-ին առաջին նիստ նշանակված լինելու հանգամանքն որքանով է խոչընդոտել Ընկերությանը նախաձեռնված Ընթացակարգի շրջանակներում դիրքորոշում կամ առարկություն ներկայացնելու իրավունքին, այն դեպքում, երբ Ընթացակարգի քննության շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ ծանուցված է եղել, Ընկերության ներկայացուցիչը ներկա է եղել և պնդել է Ընկերության կողմից արդեն իսկ դիրքորոշմամբ ներկայացվածն, այսինքն՝ վերջինս Ընթացակարգի քննության համար նախատեսված 30 օրացուցային օրվա ընթացքում զրկված չի եղել ներկայացված դիրքորոշման լրացում կամ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով գտնում եմ, որ Ընկերության կողմից դիրքորոշմամբ վկայակոչված փաստերն ակնհայտ անհիմն են, քանի որ Ընկերությունը թերևս որևէ կերպ չի հիմնավորել իր պնդումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.06.2022թ. թիվ 26/26-1/9698-2022 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և վերջիններիս ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**